

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

(Հայկ. ՅՍԹ Գիտությունների
ակադեմիայի իսկական անդամ)

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆՆ ԻՐԵՎ ՀԱՅ ՀՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՎԱՐՊԵՏ



Հառվ լսեցի Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի մահը: Հանդուցյալը մեկն է եղել աշխարհի սերնդի այն հայագետներից, որ անշարի մեծ դործ է կատարել հայ մատենագրության և մանրակարգության ասպարեզներում: Նրա կատարած բազմաթիվ աշխատանքների մասին խոսելը թողնելով մի այլ առիթի, մենք այժմ երկու խոսք ուղղում ենք ասել միայն նրա հնագրական աշխատանքների մասին:

Առաջին անգամ, որ հայ հնագրության համար մեծաքանակ նյութ է մատակարարել, բազմավաստակ Հ. Ղևոնդ Ալիշանն է: Նա իր չորս սովոր տեղագրությունների մեջ («Շիրակ», տպ. Վենետիկ, 1881 թ., «Սիսուան», տպ. Վենետիկ, 1885 թ., «Այրարատ», տպ. Վենետիկ, 1890 թ., «Սիսական», տպ. Վենետիկ, 1893 թ.), հավաքել է ամբողջ նյութ՝ գրագրերի զանազան նմանատիպ հավաքածուներ, հիշատակարանների արտագրություն, արձանագրությունների լուսատիպ նմուշներ և այլն, սկսած հնագույն ժամանակներից մինչև նորագույն շրջանը: Բայց Ալիշանն այս նյութերի սովորական հավաքումից այն կողմ չի անցել, որի խոսքով նա չի կազմել որևէ գիտական աշխատանք հայ գրչության և գրի պատմության մասին:

Նման նյութերի հավաքման դործում առանձին աշխատանք ունի նաև Վիեննայի Մխիթարյանների միաբան Հ. Հակոբոս Տաշյանը, որ «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա» աշխատության վերջում (տպ. Վիեննա, 1895 թ.) 7 էջ տախտակներով (5-ը լուսատիպ և 2-ը գունատիպ) տալիս է նույն վանքի ձեռագրերից նմուշներ:

Հ. Տաշյանը հրատարակել է նաև մի առանձին աշխատություն՝ «Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ» (տպ. Վիեննա, 1898 թ.) որ թեև համառոտ, բայց տալիս է բավարար տեղեկություն հայ գրչության արվեստի մասին: Նա ուսումնասիրում է 5-րդ դարից մինչև նորագույն ժամանակները հայ գրի պատմությունը, տալիս է քոլոր տեսակի տառերի նմուշները, ճշտում է նրանց անվանակոչությունը (Մեսրոպյան կամ գրիադիր երկաթագիր, միջին Մեսրոպյան կամ անկոնապոր երկաթագիր, անցման երկաթագիր, քոլորագիր, նարագիր և շղագիր), որոշում է յուրաքանչյուր տեսակի դործածության ժամանակը և նրանց դարձյալ պատմությունը:

Հայոց գրերի պատմության մասին մի առանձին աշխատություն ունի նաև տոգրիս գրողը: Այդ աշխատությունը մաս առ մաս տպված է Վիեննայի «Հանդէս ամսօրեայ» ուսումնաթերթում սկսած 1909 թվականից և արտատպվել է առանձին հատու-

րով «Հայոց գրերը» վերնագրով Վիեննա, 1928 թվականին: Աշխատության մեջ խոսվում է հայոց գործածած կամ իբրև թե գործածած բոլոր տեսակի գրերի մասին (հայթյան գրեր, խաղչյան բեռագրեր, նշանագրեր, Դանիելյան գրեր, պարսիկ, հույն և ասորի գրեր և վերջապես Մեսրոպյան գրեր): Այս վերջինի ուսումնասիրության նվիրված է գրքի մեծագույն մասը և տրված է յուրաքանչյուր հայերեն տառի պատմությունը 5-րդ դարից մինչև արդի բարբառները:

Նոր ժամանակներս հայկական հնագրության առանձին դասընթաց է կազմել պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանը «Հայկական պալեոգրաֆիա» խորագրով, որը լույս է տեսել 1948 թվականին:

Հնագրության համար արժեքավոր է նաև Կ. Ղաֆադարյանի «Հայկական գրի սկզբնական տեսակները» խորագրով աշխատությունը, որը լույս է տեսել 1944 թվականին:

Հայ հնագրության պատմությունն ուսումնասիրելու համար ամեն տեսակի նմուշների լավագույն հավաքածուն կազմել է Գարեգին վարդապետ Հովսեփյանը: Իր աշխատությունը, որ կրում է «Քարտեզ հայ հնագրության» խորագիրը, տպված է էջմիածնի «Շողակաթ» ժողովածուի առաջին հատորում (տպ. Վաղարշապատ, 1913 թ.) և բռնում է ժողովածուի ամբողջ երկրորդ կեսը, 171-ից 220 և ապա նկարների տախտակները 90 էջ:

Առաջաբանում հեղինակն ասում է, թե վաղաժամ էր այդպիսի աշխատության ձեռնարկել, որովհետև դեռ հայտնի չեն մեզ Վենետիկի շուրջ 3.000 ձեռագրերի ցուցակը, Նոր-Ջուլայի շուրջ 250 ձեռագրերի ցուցակը և նման ուրիշ մանր հավաքածուների ցուցակներ: Գարեգին վարդապետ Հովսեփյանի իր աշխատությունը կազմել է գլխավորապես էջմիածնի ձեռագրերի, մասամբ նաև Երուսաղեմի ձեռագրերի հետազոտությամբ: Բայց այն ժամանակ, երբ Գարեգին վարդապետը կազմում էր այս աշխատությունը, էջմիածնի մատենադարանն ուներ միայն 4.000 ձեռագիր, մինչդեռ այժմ այդ թիվը հասել է 10.000-ի:

Նույնիսկ Վիեննայի Մխիթարյանների վանքը, որի ձեռագրերի կատարյալ ցուցակը կազմել է Հ. Հակոբոս Տաշյանը, այն ժամանակ ուներ միայն 500 ձեռագիր, իսկ այժմ 1.000-ից ավելի: Պակասում է նաև արձանագրությունների ամբողջական ժողովածուն, մանավանդ որ նույնիսկ տպագրությամբ մեզ ծանոթացած արձանագրություններից շատերը լուսատիպ նմանահանությամբ չեն և եթե նույնիսկ բովանդակությամբ ճիշտ են, սակայն և այնպես տառերի հնագրական ձևերը պահված չեն:

Թեև Գարեգին վարդապետը իր խոսքերով ուզում է իջեցնել իր աշխատության արժեքը, բայց նա այնուամենայնիվ լավագույնն է մինչև այսօր հրատարակված բոլոր ժողովածուների մեջ: Նոր գտնված ձեռագրերը մեծ մասամբ նոր ժամանակի գործեր են և հայ հնագրության պատմության համար առանձին մեծ բան չեն կարող ավելացնել:

Այսպիսով, առանց նկատի առնելու Գարեգին վարդապետի համեստ «թերագնահատությունը», մենք կարող ենք պատշաճ կերպով արժեքավորել իր աշխատանքը:

Գարեգին վարդապետի բուն նպատակը «գրչության արվեստ»ի նմուշները տալն էր. բայց որովհետև 5-րդ դարից մինչև 9-րդ դարը գրված ձեռագիր հասած չէ մեզ, ուստի այդ թերին լրացնելու նպատակով հնագույն շրջանի համար հիմնվում է միայն արձանագրությունների վրա: Փակագծի մեջ այստեղ կարող ենք հիշել Սանասարյան վարժարանի № 1 ձեռագիրը, որ թեև գրված է ՆԼԾ=986 թվականին, բայց կրկնագիր լինելով, նրա կրկնագիր մասերը մեր կարծիքով 5-րդ դարից են (այդ մասին խոսել ենք մեր «Հայկական»-ի վերջին համարում, որը տպագրվում է Հայկական ՍՍՄ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրում»):

Գարեգին վարդապետի մեջ բերած նմուշներն ընդամենը 143 հատ են: Առաջինն է Երուսաղեմի Զիթենյաց լեռան մողայիկ արձանագրությունը 6—7-րդ դարերի գործ: Երկրորդն է Տեկոթի տաճարի արևմտյան դռան ճակատի արձանագրությունը 7-րդ դարից ? (Տեկոթի տաճարը, որ ըստ Թորամանյանի քննության վերականգնված է

հին հեթանոսական մեհյանից, այժմ ներկա-
շարժից փուլ է եկել, բայց նրա արձանա-
գրությունները բարեբախտաբար նախապես
լուսանկարված էին). շատեր համարում են
5-րդ դարից: Երրորդն է Ս. Հռիփսիմեի տա-
ճարի արձանագրությունը 618 թվականին:
Չորրորդն է Անիի միջնաբերդի եկեղեցու
արձանագրությունը 722 թվականին: Հինգե-
րորդն է Թալինի արձանագրությունը 7-րդ
դարի առաջին կիսից: Վեցերորդն է Մրենի
արձանագրությունը 630-ական թվականնե-
րին: Յոթերորդ և ութերորդ են Մաստարայի
արձանագրությունները 7-րդ դարի երկրորդ
քառորդից: Իններորդ է Արուճի արձանա-
գրությունը 668 թվականին: Տասներորդ է
Արտավազդ Կամսարականի շիրմի արձա-
նագրությունը 8-րդ դարի առաջին քառոր-
դից: 11-րդ՝ Ուստատուր վանականի արձա-
նագրությունը 783 թվականին: 12-րդ՝ Արու-
ճի արձանագրությունը 867 թվականին:
9-րդ դարից սկսում են հայերեն ձեռագրերը,
որոնցից հնագույնն է Լազարյան ճեմարանի
Ավետարանը 885 թվականին: Հեղինակը
կարող էր այստեղից սկսյալ վերցնել բուն
ձեռագրերի հիշատակառանները, բայց նա
այդպես չի անում: Նա շարունակում է դնել

արձանագրությունների նմուշները մինչև
№ 31, որից հետո № 32-ը էջմիածնի մատե-
նադարանի հնագույն ձեռագրի նմուշն է
8—10-րդ դարերից: Շարունակվում են
նմուշները զանազան ձեռագրերից հասնելով
մինչև № 143, որ 18-րդ դարի սկզբի գործ է
համարվում:

Այստեղ վերջանում է հեղինակի մեջ բե-
րած նմուշների հավաքածուն: Այդ բոլորի
ուսումնասիրությունը խղատանում է կատա-
րել հեղինակը առաջարանի մեջ և հրատա-
րակել «Շողակաթ»ի երկրորդ հատորում:
Բայց այդ հատորը հրատարակված չէ և հե-
տևաբար հեղինակի աշխատությունն էլ
մնում է անտիպ: Եթե հեղինակը այդ աշխա-
տությունը արդեն կատարել է, ցանկալի էր,
որ այն հրատարակվեր:

Հեղինակի այս աշխատությունն արտա-
տված է առանձին գրքով, որի վերնա-
դիրն է «Գրչութեան արուեստը հին հայոց
մէջ», էջմիածին, 1913 թ.:

Ի նկատի ունենալով վերևում մեր ասած-
ները, կարող ենք համարձակ կերպով հեղի-
նակին կոչել հայ հնագրության մեծ վար-
պետ:

